


ՈՐԵՆՔ
ԽՍԴՅ, ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՎՏՈՆՈՑ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



ԽՍԴՅ ԱՌԵՖՈԳԿՈՄԱՏԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ ☆ 1938

1 MAR 2010

347
Հ-11
sc

ՈՐԵՆՔ
ԽՍՀՄ, ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՎՏՈՆՈՄ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ԱՐԴՅՈՂԿՈՄՄԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ ☆ 1938

11 SEP 2013

34
391

37.269

ՈՐԵՆՔ

ԽՍՀՄ, ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՑԵՎ ԱՎՏՈՆՈՄ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Редактор О. А. Гамарян.
Технич. редактор М. И. Иванов.
IV квартал 1938 г. Сдано в набор 15/XI 1938 г. Подписано к печати 20/XII 1938 г. Изд. № 115.
Инч. Ю-о. Заказ тип. 3393. Формат бумаги 82×110½. Печ. листов 1. Уч.-авторск. листов 1,12.
В 1 бум. листе 177.000 зн. Тираж 5.000 экз. Уполномоч. Главлитта Б-59481. Типография «Известий Советов депутатов трудящихся СССР». Москва.



3329
41

Հոդված 1. ԽՍՀՄ Սահմանադրության 102 հոդվածին համապատասխան, արդարադատությունը ԽՍՀՄ-ում իրականացվում է ԽՍՀՄ Գերագույն դատարանի, միութենական հանրագետությունների Գերագույն դատարանների, յերկրամասային ու մարզային դատարանների, ավտոնոմ հանրապետությունների ու ավտոնոմ մարզերի դատարանների, ուղրուղային դատարանների, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի վորոշմաբ ստեղծվող՝ ԽՍՀՄ հատուկ դատարանների, ինչպես և ժողովրդական դատարանների կողմից:

Հոդված 2. ԽՍՀՄ-ում արդարադատության ինդիքն և ամեն տեսակի վատնձգություններից պաշտպանել՝

ա) ԽՍՀՄ Սահմանադրությունը և միութենական ու ավտոնոմ հանրապետությունների սահմանադրություններով սահմանված՝ ԽՍՀՄ հասարակական և պետական կառուցվածքը, տնտեսության սոցիալիստական սխմեմը և սոցիալիստական սեփականությունը.

բ) ԽՍՀՄ քաղաքացիների քաղաքական, աշխատանքային, ընակարանային և անձնական ու գույքային այլ իրավունքներն ու շահերը, վորոնք ապահովված են ԽՍՀՄ Սահմանադրությամբ և միութենական ու ավտոնոմ հանրապետությունների սահմանադրություններով.

գ) պետական հիմնարկությունների, ձեռնարկությունների, կոլանտեսությունների, կոպերատիվ և հասարակական այլ կազմակերպությունների իրավունքներն ու որենքով պահպանվող շահերը:

ԽՍՀՄ-ում արդարադատության ինդիքն եւ ապահովել խորհրդային որենքների ճշգրիտ և անշեղ կատարումը ԽՍՀՄ բոլոր հիմնարկությունների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից:

Հոդված 3. Խորհրդային դատարանը, կիրառելով քրեական պատժի միջոցներ, վոչ միայն պատժում և հանցագործներին, այլ և իրեն նպատակ եւ ղնում ուղղել ու վերադաստիարակել հանցագործներին:

իր ամբողջ գործունելյությամբ դատարանը ԽՍՀՄ քաղաքացիներին զաստիակառում և հայրենիքին և սոցիալիզմի գործին նվիրվածության վորով, խորհրդային որենքների ճշգրիտ և անշեղ կատարման վորով, սոցիալիստական սեփականությանը խնամքով վերաբերվելու, աշխատանքային կարդալահության, պետական ու հասարակական պարտքին ազնվորեն վերաբերվելու, սոցիալիստական հանրակեցության կանոնները հարգելու վորով։

Հոդված 4. Սույն որենքի 2-րդ հոդվածում մատնանշված խնդիրները ԽՍՀՄ-ում զատարաններն իրականացնում են՝

ա) քրեական գործերը գատական նիստերում քննարկելու և հայրենիքի զավաճանների, վնասարարների, սոցիալիստական ուժականությունը հափշտակողների ու ժողովրդի այլ թշնամիների նկատմամբ, ինչպես նաև կողովորիների, գողերի, խուլդանների և այլ հանցագործների նկատմամբ որենքով սահմանված պատժի միջոցներ կիրառելով։

բ) քաղաքացիների, պետական հիմնարկությունների, ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և հասարակական այլ կազմակերպությունների իրավունքներն ու շահերը չոչափող վեճերի վերաբերյալ գործերը զատական նիստերում քննարկելու և լուծելու միջոցով։

Հոդված 5. ԽՍՀՄ-ում արդարադատությունն իրականացվում է հետեւյալ սկզբունքներով։

ա) միասնական և հավասար դատ բոլոր քաղաքացիների համար՝ անկախ քաղաքացիների սոցիալական, դույքքային և պաշտոնեական դրությունից, նրանց ազգային և սահայական պատկանելությունից։

բ) միասնական և բոլոր դատարանների համար պարտադիր՝ ԽՍՀՄ քրեական, քաղաքացիական ու դատավարական որենսություն։

Հոդված 6. Դատավորներն անկախ են և միայն որենքին են յենթարկվում (ԽՍՀՄ Սահմանադրության 112 Հոդված)։

Հոդված 7. ԽՍՀՄ Սահմանադրության 110 հոդվածին համապատասխան, ԽՍՀՄ-ում դատավարությունը կատարվում է միութենական կամ ավտոնոմ հանրապետության կամ ավտոնոմ մարզի լեզվով, այդ լեզվին չտիրապետող անձանց համար ապահովելով լիակատար ծանոթացումը գործի նյութերին թարգմանչի միջոցով, ինչպես նաև դատարանում մայրենի լեզվով հանդես գալու իրավունքը։

Հոդված 8. ԽՍՀՄ Սահմանադրության 111 հոդվածին համապատասխան, գործերի քննությունը ԽՍՀՄ բոլոր դատարաններում, վորչափով որենքը բացառություններ չի նախատեսում, կատարվում է դուրսաց, ապահովելով մեղադրյալի պաշտպանվելու իրավունքը։

Հոդված 9. ԽՍՀՄ Սահմանադրության 103 հոդվածին համապատասխան, գործերի քննարկումը ԽՍՀՄ բոլոր դատարաններում կատարվում է ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, բացի որենքով հատկապես նախատեսված գեղգերից։

Հոդված 10. ԽՍՀՄ Սահմանադրության 105, 106, 107, 108 և 109 հոդվածներին համապատասխան, դատարանները ԽՍՀՄ-ում կազմվում են ընտրականության սկզբունքներով սույն որենքով սահմանված կարգով։

Հոդված 11. Դատավորներ և ժողովրդական ատենակալներ կարող են լինել ընտրական իրավունքներից ոգտվող բոլոր քաղաքացիները։

Հոդված 12. Ժողովրդական ատենակալներն իրենց պարտականությունները զատարանում կատարելու համար կանչվում են չերթականության կարգով ըստ ցուցակի, տարեկան 10 որից վոչ ավելի, բացի այն դեպքերից, յերբ այդ ժամանակի յերկարացումը բղիսում է դատական գործի քննարկմանը ժողովրդական ատենակալների մասնակցության անհրաժեշտությունից։

Իրենց պարտականությունները զատարանում կատարելու ժամանակ ժողովրդական ատենակալներն ոգտվում են դատավորի բոլոր իրավունքներով։

Հոդված 13. Բանվորներից և ծառայողներից ընտրված ժողովրդական ատենակալների աշխատավարձը պահպանվում է նրանց կողմից իրենց պարտականությունները զատարանում կատարելու ամբողջ ժամանակամիջոցում։

Մնացած բոլոր դեպքերում, ժողովրդական ատենակալների՝ զատարանում նրանց պարտականությունների հետ կապված ծանոթենական հանրապետությունների որենսդրությամբ սահմանվող կարգով։

Հոդված 14. Բոլոր դատարաններում դորձերի քննարկումը կատարվում է դատավորի և ժողովրդական յերկու ատենակալների կազմով, բացի որենքով հատկապես նախատեսված դեպքերից, յերբ այդ քննությունը կատարվում է դատարանի յերեք անդամներով։

Հոդված 15. Բացի ԽՍՀՄ Գերազույն Դատարանից և միութենական հանրապետությունների Գերազույն Դատարաններից, բոլոր դատարանների գատավճիմները, վճիռները և վրոշումները որենքով սահմանված կարգով կարող են դանդաղարկվել դատապարագածների, նրանց պաշտպանների, հայցվորների, պատասխանությունների և նրանց չահերը ներկայացնողների կողմից կամ դատախազի կողմից բոլորքարկվել վերապատճենությունին։

Վերադաս գատարանը, զանգաւոնների և բոլորքների քննության ժամանակ, ըստ գործում յեզած և կողմերի ներկայացրած նյութերի ստուգում և ստորագրությունի կայտարանի կայտարած դատավճուի կամ վճուի որինականությունը և հիմնավորվածությունը։

Հոդված 16. Որինական ուժի մեջ մտած զատական դատավճիռները և վորոշումները կարող են բողոքարկվել միմիայն ԽՍՀՄ Դատախազի կամ միութենական հանրապետության դատախազի, ԽՍՀՄ Գերագույն Դատարանի նախագահի և միութենական հանրապետության Գերագույն Դատարանի նախագահի կողմից՝ սույն որենքի 51, 64, 74 հոդվածներին համապատասխան:

Հոդված 17. Դատավորներին պաշտոնից և ժողովրդական ատենակալներին նրանց պարտականություններից ազատել թույլատրվում ե վոչ այլ կերպ, քան ընտրողների կողմից հետ կանչելու, կամ թե նրանց նկատմամբ դատարանի կայացրած դատավճութիւնը ուժի:

Հոդված 18. Դատավորների դեմ քրեական հետապնդում հարուցելը, այդ կապակցությամբ նրանց պաշտոնից հեռացնելը և դատի տալը կատարվում ե՝

ժողովրդական դատավորների, յերկրամասային, մարզային, ուկրուգային դատարանների անդամների, ավտոնոմ մարզերի դատարանների անդամների, միութենական և ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Դատարանների անդամների նկատմամբ՝ միութենական հանրապետության դատախազի վարոշմամբ՝ միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության սանկցիայով.

ԽՍՀՄ Գերագույն Դատարանի և ԽՍՀՄ հատուկ դատարանների անդամների նկատմամբ՝ ԽՍՀՄ Դատախազի վորոշմամբ՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության սանկցիայով:

Հոդված 19. Ժողովրդական դատավորի ժամանակավոր բացակայության դեպքում (հիվանդություն, արձակուրդ և այլն) դատավորի պարտականությունների կատարումը նրա բացակայության ժամանակամիջոցում աշխատավորների դեպուտատների վաշնային խորհրդի կողմից դրվում է ժողովրդական ատենակալներից մեկի վրա:

Հոդված 20. Մինչև իր լիազորությունների ժամկետը լրանալը ժողովրդական դատավորի հեռանալու դեպքում, ժողովրդական դատավորի նոր ընտրությունները կազմակերպվում են հեռանալու որից վոչ ուշ քան 2 ամսվա ընթացքում:

Ժողովրդական դատավորի նոր ընտրությունները կազմակերպվում են միութենական հանրապետության Արդարադատության ժողովրդական կոմիսարիատի կողմից, իսկ ավտոնոմ հանրապետությունում՝ ավտոնոմ հանրապետության Արդարադատության ժողովրդական կոմիսարիատի կողմից:

Միութենական ու ավտոնոմ հանրապետությունների ոկրուեցին, յերկրամասային, մարզային և Գերագույն Դատարանների անդամների, ինչպես և ԽՍՀՄ հատուկ դատարանների ու ԽՍՀՄ Գերագույն Դատարանի անդամների հեռանալու դեպքում, դա-

տարանների նոր անդամների ընտրությունները կատարվում են մարզի, յերկրամասի, ոկրուեցի աշխատավորների դեպուտատների միութենական և ավտոնոմ հանրապետության Գերագույն Խորհրդի, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի հերթական սեուխայում:

II

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Հոդված 21. Ժողովրդական դատարանը քննարկում է՝ արեական դոլժերը՝ քրեական դոլժերը՝ առողջության, ազատության և արժանապատվության դեմ հանցագործությունների՝ սպանությունների, մարմնական վնասվածքներ հասցնելու, ապօրինի արորտների կատարելու, ապօրինի ազատազրկման, բռնաբարության, ալիմենտները չարամտորեն չվճարելու, վիրավորանքի, խուլիգանության վերաբերյալ.

Պուրքային հանցագործությունների՝ ավաղակության, կորպության, իսրարդախության, կորպութի վերաբերյալ՝ պլուտի գողության, իսրարդախության հանցագործությունների՝ իշխանությունն ի չարք գործ գնելու, իշխանազանցության, իշխանության անդործունության, վաստնումների, անստաեսականության, վարության, կեղծիքների, թերակշումի և թերաչափումի, զների բարձրացման վերաբերյալ.

Կառավարման կարգի դեմ հանցագործությունների՝ ընտրական որենքի խախտման, որենքով սահմանված հարկերն ու գանձութեները չարամտորեն չվճարելու, պետական մթերումները և պարհակները կատարելուց հրաժարվելու, զորակոչեց և զինվորական ծառայության պարտականություններից խուսափելու, իշխանության որդանների որինական կարգադրությունները խախտելու վերաբերյալ.

Բ) քաղաքացիական գործերը՝ գործիքի վերաբերյալ հայցերի, աշխատանքային որենքների խախտման հետ կապված հայցերի ալիմենտների վճարելու վերաբերյալ հայցերի,

ժառանգության վերաբերյալ հայցերի մասին, և քրեական ու քաղաքացիական այլ գործեր, զորոնք որենքով հանձնված են նրա գարմանը:

Հոդված 22. ԽՍՀՄ Սահմանադրության 109 հոդվածի հիման վրա ժողովրդական դատարաններն ընտրվում են չքաղաքացիների կողմից ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական քացիների կողմից ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ, յերեք տարի ժամանակով:

Հոդված 23. Ժողովրդական դատավորները և ժողովրդական ատենակալներն ընտրվում են շրջանների քաղաքացիների կողմց, ըստ ընտրական ուկրուգների. Ժողովրդական դատավորների և ժողովրդական ատենակալների ընտրությունների ընտրուս կան ուկրուգն ընդդրկում և տվյալ ժողովրդական դատարանի գործունելության տերիտորիայում ապրող ամբողջ բնակչությանը:

Հոդված 24. Ժողովրդական դատավորների և ժողովրդական ատենակալների թեկնածուներ առաջարկելու իրավունքն ապահովում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների համար—կոմունիստական կուսակցական կազմակերպությունների, պրոֆեսիոնալ միությունների, կոռեցիատիվների, յերիտասարդության կազմակերպությունների, կուլտուրական ընկերությունների, ինչպես և բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովների՝ ըստ ձեռնարկությունների, պինդորական ծառայողների՝ ըստ զրյամասերի՝ գյուղացիների ընդհանուր ժողովների՝ ըստ կոլտնտեսությունների, խորհունակությունների բանվորների ու ծառայողների՝ ըստ խորհունակությունների:

Հոդված 25. Ժողովրդական դատավորների և ժողովրդական ատենակալների թեկնածուների ցուցակագրման և թեկնածուների ցուցակների հարաբերկման կարգը, ինչպես և նբանց ընտրությունների ժամկետներն ու կարգը վորոշվում են միութենական հանրապետությունների Գերազույն Խորհուրդների կողմից հաստատվող՝ «Դատավորների և ժողովրդական ատենակալների ընտրությունների կանոնադրություններով»:

Հոդված 26. Ժողովրդական դատարանների քանակը յուրաքանչյուր շրջանի համար սահմանվում է միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհրդի կողմից միութենական հանրապետության Արդարադատության ժողովրդական կոմիսարի առաջարկությամբ: Ավտոնոմ հանրապետություններում ժողովրդական դատարանների քանակը յուրաքանչյուր շրջանի համար սահմանվում է ավտոնոմ հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհրդի կողմից՝ ավտոնոմ հանրապետության Արդարադատության ժողովրդական կոմիսարի առաջարկությամբ:

Հոդված 27. Ժողովրդական դատարանը մինչև դատական նիստում գործը քննարկելը

ա) Հաստատում է դատախազի ներկայացրած մեղադրական յեղակացությունը: Սեղադրական յեղակացության հետ համաձայն ըլինելու գեղաքում, ժողովրդական դատարանն իրավունքունի գործը վերաբերձնել դատախազին՝ լրացրույթիչ քննության համար, կամ գործը կարճել դրա համար բավականաչափ հիմքը ունենալու դեպքում:

բ) լուծում է մեղադրյալին կալանավորելու կամ կալանքից ազատելու հարցը.

գ) վորոշում է բնդունում գործի քննարկման ժամանակ պաշտպանի և դատախազի անպայման մասնակցության վերաբերյալ:

Հոդված 28. Ժողովրդական դատավորը՝

ա) ըստ ստացված գանգատների և դիմումների վորոշում և ընդունում քրեական հետապնդում հարուցելու, կամ դրանում մերժելու վերաբերյալ.

բ) անհրաժեշտության դեպքում, դիմումները կամ գանգատներն ուղարկում ե քննչական որպաններին՝ քննության համար.

գ) նշանակում է գործեր լսելու համար.

դ) կարգադրությաններ ե անում մեղադրյալներին, վկաներին, եքաղերաններին դատարան կանչելու վերաբերյալ և հայցվորներին ու պատասխանողներին ծանուցում է գործը քննարկելու ժամանակի մասին:

ե) նախադահում է ժողովրդական դատարանի նիստերին:

Հոդված 29. Ժողովրդական դատավորներն իրենց աշխատանքի համար հաջիվ են տալիս ընարողների առաջ:



ՅԵՐԿՐԱՄԱՍԱՅԹԻՆ, ՄԱՐԶԱՅԻՆ, ՈԿՐՈՒԳԱՅՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ ՅԵՎ ԱԼՃՈՆՈՄ ՄԱՐԶԻ ԴԱՏԱՐԱՆ

Հոդված 30. ԽՍՀՄ Սահմանդրության 108 Հոդվածին համապատասխան, յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանը և ավտոնոմ մարզի դատարանն ընտրվում է աշխատավորների գեղագուտաների յերկրամասային, մարզային, ոկրուգային խորհրդի կամ ավտոնոմ մարզի աշխատավորների գեղագուտաների խորհրդի կողմից, կինդ տարի ժամանակով:

Հոդված 31. ՅԵՐԿՐԱՄԱՏԱՍԱՅԻՆ, մարզային, ոկրուգային դատարանը և ավտոնոմ մարզի դատարանը կազմված է նախադահից, նախադահի տեղակալներից, դատարանի անդամներից և ժողովրդական ատենակալներից, վորոնք կանչվում են դատական գործերի քննարկմանը մասնակցելու:

Հոդված 32. ՅԵՐԿՐԱՄԱՏԱՍԱՅԻՆ, մարզային, ոկրուգային դատարանը և ավտոնոմ մարզի դատարանը քննարկում են որենքով նրանց վարմանը հանձնված քրեական գործեր՝ հակածեղափոխական հանցագործությունների, պետական կառավարման ղեծ առանձնապես վտանգավոր հանցագործությունների, սոցիալիստական սեփականության հափշտակման, պաշտոնեական և տնաւսական առանձնապես լուրջ հանցագործությունների վերաբերյալ, ինչպես և որենքով նրանց վարմանը հանձնված քաղաքական գաղա-

քացիական դործեր՝ պետական ու հասարակական հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների միջև յեղած վեճերի առթիվ:

Յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանը և ավտոնոմ մարզի դատարանը, բացի դրանից, քննարկում են ժողովրդական դատարանների դատավճիռների, վճիռների և վորոշումների վերաբերյալ դանդատներն ու բողոքները:

Հոդված 33. Յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանի և ավտոնոմ մարզի դատարանի կազմում դործում են.

ա) քրեական դործերի դատական կոլեգիա՝ յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանի և ավտոնոմ մարզի դատարանի իրավասությանը յենթակա քրեական դործերը քննարկելու համար, ինչպես և ժողովրդական դատարանների դատավճիռների և վորոշումների վերաբերյալ դանդատներն ու բողոքները:

բ) քաղաքացիական դործերի դատական կոլեգիա՝ յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանի և ավտոնոմ մարզի դատարանի իրավասությանը յենթակա քաղաքացիական դործերը քննարկելու համար, ինչպես և ժողովրդական դատարանների վճիռների և վորոշումների վերաբերյալ դանդատներն ու բողոքները քննարկելու համար:

Հոդված 34. Յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանի և ավտոնոմ մարզի դատարանի դատական կոլեգիաները քրեական և քաղաքացիական դործերը քննարկում են նախագահով—դատարանի նախագահի կամ անդամի և ժողովրդական յերկու ատենակաների կազմով:

Հոդված 35. Յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանի, ավտոնոմ մարզի դատարանի դատական կոլեգիաները քննարկում են ժողովրդական դատարանների դատավճիռների, վճիռների և վորոշումների վերաբերյալ դանդատներն ու բողոքները, համապատասխան դատարանի յերեք անդամի կազմով:

Հոդված 36. Յերկրամասի կազմի մեջ մտնող մարզերում ոկրուգային և մարզային դատարանները գործում են նույն կազմով, ինչ վոր յերկրամասային դատարանը:

Հոդված 37. Յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանի և ավտոնոմ մարզի դատարանի նախագահը նախագահում և դատական նիստերին կամ դատական նիստերին նախագահություն համար նշանակում է յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանի և ավտոնոմ մարզի դատարանի անդամի, նշանակում է դործեր լսելու համար, կարգադրությունների անում մեղադրյալներին, վկաներին, եքսպերտներին դատարան կանչելու վերաբերյալ և հայցվորներին ու պատասխանողներին ծանուցում է գործը քննարկելու ժամանակի մասին:

ԱՎՏՈՆՈՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՑՆ ԴԱՏԱՐԱՐՄՆ

Հոդված 38. ԽՍՀՄ Սահմանադրության 107 հոդվածին համապատասխան, ավտոնոմ հանրապետության Գերագույն Դատարանն ընտրվում է ավտոնոմ հանրապետության Գերագույն Խորհրդի կազմից, 5 տարի ժամանակով:

Հոդված 39. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Դատարանը կազմված է նախագահից, նախագահի տեղականերից, դատարանի անդամներից և ժողովրդական ատենականերից, վորոնք կանչվում են դատական դործերի քննարկմանը մասնակցելու:

Հոդված 40. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Դատարանը քննարկում է որենքով նրա վարմանը հանձնված քրեական գործեր՝ հակահեղափոխական հանցագործությունների, պետական կառավարման դեմ առանձնապես վտանգավոր հանցագործությունների, սոցիալիստական սեփականության հափշտակամանից պատությունների, սոցիալիստական առանձնապես լուրջ հանձագործությունների վերաբերյալ, ինչպես և որենքով նրա վարմանը հանձնված քաղաքացիական գործեր՝ պետական ու հասրակական հիմնարկությունների, ձեռնարկությունների և կաղմական կազմությունների միջև յեղած վեճերի առթիվ:

Ավտոնոմ հանրապետության Գերագույն Դատարանը, բացի դրանից, քննարկում է ժողովրդական դատարանների դատավճիռների, վճիռների և վորոշումների վերաբերյալ դանդատներն ու բողոքները:

Հոդված 41. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Դատարանի կազմում դործում են.

ա) քրեական գործերի դատական կոլեգիա՝ որենքով ավտոնոմ հանրապետության Գերագույն Դատարանի վարմանը հանձնված քրեական գործերը քննարկելու համար, ինչպես և ժողովրդական դատարանների դատավճիռների և վորոշումների վերաբերյալ դանդատներն ու բողոքները քննարկելու համար.

բ) քաղաքացիական գործերի դատական կոլեգիա՝ որենքով ավտոնոմ հանրապետության Գերագույն Դատարանի վարմանը հանձնված քաղաքացիական գործերը քննարկելու համար, ինչպես և ժողովրդական դատարանների վճիռների և վորոշումների վերաբերյալ դանդատներն ու բողոքները քննարկելու համար:

Հոդված 42. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Դատարանի դատական կոլեգիաները գործերը դատական նախագահի կազմակերպությունների գործերը քննարկում են նախագահովի՝ Գերագույն Դատարանի նախագահի կամ անդամի և ժողովրդական յերկու ատենակաների կազմով:

Հոդված 43. Ավտոնոմ հանրապետության Գերազույն Դատարանի դատական կոլեգիաները քննարկում են ժողովրդական դատարանների դատավճիռների, վճիռների և վորոշումների վերաբերյալ գանդատներն ու բողոքները, ավտոնոմ հանրապետության Գերազույն Դատարանի յերեք անդամի կազմով:

Հոդված 44. Ավտոնոմ հանրապետության Գերազույն Դատարանի նախագահը նախագահում է դատական նիստերին, կամ դատական նիստերին նախագահելու համար նշանակում է ավտոնոմ հանրապետության Գերազույն Դատարանի անդամի, նշանակում է գործեր լսելու համար, կարգադրություններ և անում մեղադրյալներին, վկաներին, եջսովերտներին դատարան կանչելու վերաբերյալ և հայցվորներին ու պատասխանողներին ծառացում է գործը քննարկելու ժամանակի մասին:

V

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՑՆ ԴԱՏԱՐԱՆ

Հոդված 45. Միութենական հանրապետության Գերազույն Դատարանը հանդիսանում է միութենական հանրապետության բարձրագույն դատական որդանը: Միութենական հանրապետության Գերազույն Դատարանի վրա գրվում է միութենական հանրապետության, տվյալ միութենական հանրապետության կազմի մեջ մտնող ավտոնոմ հանրապետությունների, յերկրամասերի, մարզերի ու ոկրուգների բոլոր դատական որդանների դատական գործունեյության նկատմամբ հսկողությունը:

Հոդված 46. ԽՍՀՄ Սահմանադրության 106 հոդվածին համապատասխան, միութենական հանրապետության Գերազույն Դատարանն ընտրվում է միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից, հինգ տարի ժամանակով:

Հոդված 47. Միութենական հանրապետության Գերազույն Դատարանը բաղկացած է նախագահից՝ նախագահի տեղակալներից, դատարանի անդամներից և ժողովրդական ատենակալներից, վորոնք հանչվում են դատական գործերի քննարկմանը մասնակցելու:

Հոդված 48. Միութենական հանրապետության Գերազույն Դատարանը գործում է հետեւյալ կազմով՝

ա) քրեական գործերի դատական կոլեգիա՝ որինքով միութենական հանրապետության Գերազույն Դատարանի վարժանը հանձնված քրեական գործերը քննարկելու համար, ինչպես և միութենական հանրապետության յերկրամասային, մարզային և այլ դատարանների դատավճիռների և վորոշումների վերաբերյալ գանդատներն ու բողոքները քննարկելու համար.

բ) քաղաքացիական գործերի դատական կոլեգիա՝ որինքով միութենական հանրապետության Գերազույն Դատարանի վար-

մանը հանձնված քաղաքացիական գործերը քննարկելու համար, ինչպես և միութենական հանրապետության յերկրամասային, մարզային և այլ դատարանների վճիռների և վորոշումների վերաբերյալ գանդատներն ու բողոքները քննարկելու համար:

Հոդված 49. Միութենական հանրապետության Գերազույն Դատարանի դատական կոլեգիաները գործերը քննարկում են նախագահողի՝ Գերազույն Դատարանի նախագահի դատավճիռներին, վճիռների և վորոշումների վերաբերյալ գանդատներն ու բողոքները Գերազույն Դատարանի յերեք անդամի կազմով:

Հոդված 50. Միութենական հանրապետության Գերազույն Դատարանի դատական կոլեգիաները քննարկում են միութենական հանրապետության յերկրամասային, մարզային և այլ դատարանների դատավճիռների, վճիռների և վորոշումների վերաբերյալ գանդատներն ու բողոքները Գերազույն Դատարանի յերեք անդամի կազմով:

Հոդված 51. Միութենական հանրապետության Գերազույն Դատարանը հանրապետության դատարանների դատական գործունեյության նկատմամբ հսկողություն է իրականացնում հետեւյալ կերպ:

ա) քննարկում է ԽՍՀՄ Դատախազի, միութենական հանրապետության Դատախազի, ԽՍՀՄ Գերազույն Դատարանի նախագահի, միութենական հանրապետության Գերազույն Դատարանի նախագահի բողոքները՝ որինական ուժի մեջ մտած դատավճիռների, վճիռների և վորոշումների վերաբերյալ.

բ) դատական նիստերում քննարկում է միութենական հանրապետության դատարանների կողմից վճռված գործերի վերաբերյալ գանդատներն ու բողոքները:

Հոդված 52. Միութենական հանրապետության Գերազույն Դատարանի նախագահը նախագահում է դատական նիստերին կամ դատական նիստերին նախագահական հանրապետության Գերազույն Դատարանի անդամի, նշանակում է գործեր լսելու համար, կարգադրություններ և անում մեղադրյալներին, վկաներին, եջսովերտներին դատարան կանչելու վերաբերյալ և հայցվորներին ու պատասխանողներին ծանուցում և գործը քննարկելու ժամանակի մասին:

VI

ԽՍՀՄ ՀԱՏՈՒԿ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

Հոդված 53. ԽՍՀՄ Սահմանադրության 102 հոդվածի հիման վրա գործում են ԽՍՀՄ հետեւյալ հատուկ դատարանները.

ա) վիճակի դատական արքունական դատարաններ.

բ) յերկաթուղային տրանսպորտի գծային դատարաններ.

գ) ջրային տրանսպորտի գծային դատարաններ:

Հոդված 54. ԽՍՀՄ Սահմանադրության 105 հոդվածին համապատասխան, ԽՍՀՄ հատուկ դատարանների նախագահը, նախագահի տեղակալները, անդամներն ընտրվում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից, հինգ տարի ժամանակով:

Հոդված 55. Զինվորական տրիբունալների, յերկաթուղային և ջրային տրանսպորտի գծային դատարանների դատարական նիստերին մասնակցելու համար կանչվում են ժողովրդական առենակալներ, վորոնք ընտրվում են աշխատավորների գեպուտատների յերկամասացին ու մարզային խորհուրդների և միութենական ու ալտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների կողմից:

Հոդված 56. Զինվորական տրիբունալները, յերկաթուղային և ջրային արանսպորտի գծային դատարանները գործերը քննարկում են նախագահով՝ դատարանի նախագահի կամ անդամի և ժողովրդական յերկու ատենակալների կազմով, բայց այն գեպքերից, յերբ ըստ որենքի գործերը քննարկվում են համապատասխան դատարանի յերեք անդամի կազմով:

Հոդված 57. Զինվորական տրիբունալները կազմակերպվում են.

ա) զինվորական ոկրուգներին, ուղղմաձակատներին և ծովային նավատորմներին կից.

բ) բանակներին, կորպուսներին, զինվորական այլ միավորումներին ու ուղղմաձականացված հիմնարկություններին կից:

Հոդված 58. Զինվորական տրիբունալները քննարկում են զինվորական հանցանործությունների, ինչպես և որենքով նրանց վարմանը հանձնված այլ հանցանործությունների վերաբերյալ դորձերը:

Հոդված 59. Ոկրուգներին, ուղղմաձակատներին և ծովային նավատորմներին կից զինվորական տրիբունալները քննարկում են որենքով նրանց վարմանը հանձնված քրեական գործեր, ինչպես և քննարկում են բանակների, կորպուսների, զինվորական այլ միավորումների ու ուղղմաձականացված հիմնարկությունների զինվորական տրիբունալների քննարկած գործերի դատավոճիները:

Հոդված 60. Յերկաթուղային և ջրային արանսպորտի գծային դատարանները քննարկում են արանսպորտում աշխատանքային կարգապահությունը վիճեցնող հանցանործությունների և տըրանսպորտի նորմալ աշխատանքը իսկստող այլ հանցանործությունների վերաբերյալ որենքով նրանց վարմանը հանձնված դորձերը:

Հոդված 61. Յերկաթուղային և ջրային տրանսպորտի գծային դատարանները համապատասխանորեն կազմակերպվում են յերկաթուղիներում և հաղորդակցության ջրային ճանապարհներում:

Հոդված 62. Զինվորական տրիբունալների, յերկաթուղային և ջրային արանսպորտի գծային դատարանների նախագահները նախագահությունը են դատարական նիստերին կամ դատարական նիստերին նախագահէլու համար նշանակում են զինվորական տրիբունալների և գծային դատարանների անդամների, նշանակում են գործեր լսելու համար, կարգադրություններ են անում մեղադրյալներին, վկաններին և եքսպերտներին դատարան կանչելու վերաբերյալ:

VII

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՑՆ ԴԱՏԱՐԱՆՆ

Հոդված 63. ԽՍՀՄ Սահմանադրության 104 և 105 հոդվածներին համապատասխան, ԽՍՀՄ Գերագույն Դատարանը հանդիսանում է բարձրագույն դատարական որգանը և ընտրվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից, հինգ տարի ժամանակով:

ԽՍՀՄ Գերագույն Դատարանի վրա գրվում է ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների ըոլոր դատարական որգանների դատարական զործունելության նկատմամբ հոկողությունը:

Հոդված 64. ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների ըոլոր դատարական որգանների դատարական որդընունելու համար համարկությունը Գերագույն Դատարանն իրականացնում է հետեւյալ կերպ.

ա) քննարկում է ԽՍՀՄ Դատավայի և ԽՍՀՄ Գերագույն Դատարանի նախագահի բողոքների՝ դատարանների որինական ուժի մեջ մտած դատավճիռների, վճիռների և վորոշումների վերաբերյալ.

բ) քննարկում է զինվորական տրիբունալների, յերկաթուղային և ջրային արանսպորտի գծային դատարանների կողմից քննարկած գործերի վերաբերյալ զանգատներն ու բողոքները:

Հոդված 65. ԽՍՀՄ Գերագույն Դատարանը կազմված է Գերագույն Դատարանի նախագահից, նախագահի տեղակալներից, անդամներից և ժողովրդական առենակալներից, վորոնք կանչվում են դատարական զործերի քննարկմանը մասնակցելու, և գործում է հետեւյալ կազմով.

ա) քրեական որդըների դատարական կոլեգիա.

բ) քաղաքացիական որդըների դատարական կոլեգիա.

գ) զինվորական կոլեգիա.

դ) յերկաթուղային կոլեգիա.

ե) ջրային արանսպորտի կոլեգիա:

Հոդված 66. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի քրեական որդերի դատարական կոլեգիան քննարկում է որենքով նրա վարմանը

Հանձնված քրեական դործեր, ինչպես և ֆննարկում և միութենական հանրապետությունների Գերագույն Դատարանների դատավճիռների և վորոշումների վերաբերյալ բողոքները:

Հոդված 67. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի քաղաքացիական դործերի դատական կոլեգիան ֆննարկում և որենքով նրա վարժանը հանձնված քաղաքացիական դործեր, ինչպես և ֆննարկում և միութենական հանրապետությունների Գերագույն Դատարանների վճիռների և վորոշումների վերաբերյալ բողոքները:

Հոդված 68. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի քրեական և քաղաքական դործերի դատական կոլեգիաները գործերը ֆննարկում են նախագահով՝ ԽՍՀՄ Գերագույն Դատարանի նախագահի կամ անդամի և ժողովրդական յերկու ատենակալների կազմով։

ԽՍՀՄ Գերագույն Դատարանի քրեական և քաղաքացիական դործերի դատական կոլեգիաները ֆննարկում են միութենական հանրապետությունների Գերագույն Դատարանների դատավճիռների, վորոշումների և վճիռների վերաբերյալ բողոքները ԽՍՀՄ Գերագույն Դատարանի յերեք անդամի կազմով։

Հոդված 69. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի զինվորական կոլեգիան ֆննարկում և որենքով նրա վարժանը հանձնված դործեր, ինչպես և ֆննարկում և զինվորական արիունալների դատավճիռների և վորոշումների վերաբերյալ բողոքներն ու դանդատները։

Հոդված 70. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի զինվորական կոլեգիան դործերը ֆննարկում և նախագահով՝ ԽՍՀՄ Գերագույն Դատարանի զինվորական կոլեգիայի նախագահի կամ անդամի և ժողովրդական յերկու ատենակալների կազմով, բացի այն գեպերից, վորոնք հատկապես նախատեսված են քրեական-դատավրական որենսությով, յերբ զործերը ֆննարկում են զինվորական կոլեգիայի յերեք անդամի կազմով։

ԽՍՀՄ Գերագույն Դատարանի զինվորական կոլեգիան զինվորական արիունալների դատավճիռների և վորոշումների վերաբերյալ բողոքներն ու զանդաները ֆննարկում և ԽՍՀՄ Գերագույն Դատարանի զինվորական կոլեգիայի յերեք անդամի կազմով։

Հոդված 71. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի յերկաթուղային կամ ջրային արանսպորտի կոլեգիաները ֆննարկում են հանցանձնված վերաբերյալ զործեր, վորոնք որենքով զործությունների վերաբերյալ բարականը, ինչպես և ֆննարկում են յերկաթուղային ու ջրային արանսպորտի գծային դատարանների վորոշումների վերաբերյալ ստացվող դանատաներն ու բողոքները։

Հոդված 72. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի յերկաթուղային կամ ջրային արանսպորտի կոլեգիաները զործերը ֆննարկում են

նախագահով՝ համապատասխան կոլեգիայի նախագահի կամ անդամի և ժողովրդական յերկու ատենակալների կազմով։
Հոդված 73. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի յերկաթուղային կամ ջրային արանսպորտի կոլեգիաները ֆննարկում են յերկաթուղային և ջրային արանսպորտի գծային դատարանների դատավճիռների և վորոշումների գեմ ստացվող զանդատներն ու բողոքները, ԽՍՀՄ Գերագույն Դատարանի համապատասխան կոլեգիայի յերեք անդամի կազմով։

Հոդված 74. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի նախագահը կարող է իր վրա վերցնել ԽՍՀՄ Գերագույն Դատարանի կոլեգիայի կողմից ֆննարկով ամեն մի զործին նախագահելու։

ԽՍՀՄ Գերագույն Դատարանի նախագահը և ԽՍՀՄ Դատախազն իրավունք ունեն ԽՍՀՄ կամ միութենական հանրապետությունների ամեն մի դատարանից պահանջել ամեն մի զործ և այդ զործի առթիվ որենքով սահմանված կարգով մտցնել իրենց բողոքը։

Հոդված 75. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի կոլեգիաների գործավճրների և վճիռների և վորոշումների գեմ ԽՍՀՄ Գերագույն Դատարանի նախագահի կամ ԽՍՀՄ դատախազի կողմից ստացվող բողոքները ֆննարկելու համար հրավիրվում են ԽՍՀՄ Գերագույն Դատարանի Պլենում, վորը ԽՍՀՄ Գերագույն Դատարանի կողմից ֆննարկված դատական գործերի առթիվ ընդդունված վճիռների հիման վրա նույնպես զեկալվար ցուցումներ և տալիս դատական պրակտիկայի հարցերի վերաբերյալ։

Հոդված 76. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի Պլենումը կազմված է ԽՍՀՄ Գերագույն Դատարանի նախագահից, նրա տեղականներից և ԽՍՀՄ Գերագույն Դատարանի բոլոր անդամներից։

ԽՍՀՄ Դատախազի մասնակցությունը Պլենումին պարտադիր է։
ԽՍՀՄ Գերագույն Դատարանի Պլենումի նիստին մասնակցում և ԽՍՀՄ Արդարադատության ժողովրդական կոմիսարը։

Հոդված 77. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի Պլենումի նիստերը հրավիրվում են վոչ պակաս քան յերկու ամիսը մեկ անդամ։

3329
4/1

VIII

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒԽԵՐ

Հոդված 78. Քաղաքացիական գործերի վերաբերյալ վճիռների ու վորոշումների կատարումը և գրեական գործերի վերաբերյալ դատավճրների կատարումը գույքային բռնադանձումների մասում իրադրծվում ե դատական կատարածուների կողմից։

Հոդված 79. Դատական կատարածուները լինում են ժողովրդական դատական դատարաններին կիու ոկրուգային, յերկրամասային,



մարզային դատարաններին, ավտոնոմ մարզերի դատարաններին, ավտոնոմ և միութենական հանրապետությունների Գերագույն Դատարաններին կից և նշանակվում են միութենական հանրապետության Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատի կողմից, իսկ ավտոնոմ հանրապետություններում—ավտոնոմ հանրապետության Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատի կողմից :

Հոդված 80. Դատական դատավճիռների, վճիռների և վորոշումների կատարման վերաբերյալ դատական կատարածուների կողմից ներկայացվող պահանջները պարտադիր են բոլոր պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար :

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության
Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության
Քարտուղար՝ Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ. 16 սեպտեմբեր 1938 թ.



Ց Ա Ն Կ

Հոդվածներ եջ

I. Բնդէանուր դրույթներ	1—20	3
II. Ժողովրդական դատարան	21—29	7
III. Յերկրածասային, մարզյին, ոկրուգային դատարան և ավտոնոմ մարզի դատարան	30—37	9
IV. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Դատարան	38—44	11
V. Միութենական հանրապետության Գերագույն Դատարան	45—52	12
VI. ԽՍՀՄ Հասուկ դատարաններ	53—62	13
VII. ԽՍՀՄ Գերագույն Դատարան	63—77	15
VIII. Դատական կատարածուներ	78—80	17



Цена 10 коп.

37.269

521

«ЗАКОН О СУДОУСТРОЙСТВЕ СССР, СОЮЗНЫХ И АВТОНОМНЫХ РЕСПУБЛИК» НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ.

АДРЕС ИЗДАТЕЛЬСТВА:

Москва, центр, Красная площадь, 3,
здание СНК СССР, 2-й этаж, пом. 28.